

Արձանագրություն N 11

Протокол N 11

«ԵՔ-ԵՓՄԱՇԶԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի
Заседание оценочной комиссии под кодом «EQ-EPMAshDzB-21/1»

ք. Երևան

г. Ереван

12.08.2021թ.

Ժամը 12:00

12.08.2021г.

12:00ч.

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝
Հանձնաժողովի անդամներ՝

Հրաչյա Սարգսյան
Գրիգոր Հարությունյան, Սուրեն Օհանյան, Անդրանիկ
Սեդոյան, Վահե Բալասյան, Դավիթ Ճգնավորյան,
Գևորգ Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Համբարձումյան

Բացակայում էին՝

Էդգար Գալստյան, Արթուր Սարգսյան

1. «ԵՔ-ԵՓՄԱՇԶԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 10.08.2021
թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ
Ответ на разъяснения по запросу поданного 10.08.2021г. в рамках закупочной процедуры
под кодом «EQ- EPMAshDzB-21/1»

(Հ. Սարգսյան
Г. Саргсян)

1.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի ներկայացրած հարցմանը տրամադրվել է
հետևյալ պարզաբանումը.

По запросу участника, со стороны оценочной комиссии были предоставлены следующее
разъяснение.

1. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Geodata Engineering - ի բաժնետոմսերի 80% -ը տնօրինում է Չինական PowerChina International
ընկերությունների խումբը, որը 2020 թվականի հուլիսին Fitch- ի կողմից գնահատվել է **BBB +**
վարկանիշով՝ **կայուն** կանխատեսմամբ, իսկ 2020 թվականի սեպտեմբերին՝ Moody's-ի կողմից
գնահատվել է **Baa1** վարկանիշով՝ **կայուն** կանխատեսմամբ: Ունենալով շատ ավելի բարձր
վարկանիշներ քան ՈչՆերդրումային Կատեգորիաների գծով Հայաստանի Հանրապետությանը
տրված ինքնիշխան վարկանիշները՝ (համապատասխանաբար **B +** և **Ba3**), խնդրում ենք
տեղեկացնել, թե արդյոք մենք կարող ենք ազատվել «Որակավորման երաշխիք» դրույթից՝ Հրավերի
2.4 կետի համաձայն, եթե դա երաշխավորված է PowerChina-ի կողմից.

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գնման ընացակարգին մասնակցելու հայտը ներկայացվել է «ԳԵՈՂԱՏԱ, ՍԻՎԵՆ, ՍԻՏԵԿՈ» Համատեղ Ձեռնարկության կողմից՝ Հրավերի 2.4 կետով սահմանված պահանջը վերաբերելի է միայն հայտ ներկայացրած մասնակցին:

2. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Մենք խնդրում ենք հաստատել որ պայմանագրի կատարման 10% երաշխիքը (Հրավերի 6.3 կետ) և կանխավճարի երաշխիքը (Հրավերի 6.5 կետ) կարող են մեր կողմից տրամադրվել ապահովագրական երաշխիքի տեսքով.

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Գնման ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի 6.3 և 6.5 կետերում հստակ սահմանված են պայմանագրի և կանխավճարի ապահովման ներկայացնելու ձևաչափերը

3. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Մասնագիտական փորձի ցուցադրումը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ (Հրավերի 2.8, (1), (ա) կետ) անհրաժեշտ է իմանալ, թե արդյոք օտար լեզվով փաստաթղթերը կարող են ներկայացվել պարզ թարգմանության ձևով և, շատ երկար փաստաթղթերի դեպքում՝ անհրաժեշտ տեղեկատվության վերաբերյալ քաղվածքների ձևով.

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Հայտում ներառված բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, իսկ որակավորմանը կից ներկայացվող փաստաթղթերը /աշխատակիցների վերաբերյալ տվյալները՝ անձնագրերի, որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները, նմանատիպ պայմանագրեր/ կարող են ներկայացվել և/կամ հայերեն, և/կամ ռուսերեն, և/կամ անգլերեն:

4. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Խնդրում ենք պարզաբանել թե որ փաստաթղթերն են պահանջվում «նախկինում կնքված պայմանագրերի» հարցումը բավարարելու համար՝ համաձայն Հրավերի 4.5 կետի (3) ենթակետի.

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Գնման ընթացակարգի երկրորդ փուլի հրավերով 2.8 կետի 1-ին ենթակետը սահմանում է՝ Մասնակցին ներկայացվող՝ <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ 5 մլն ԱՄՆ դոլարից: Ընդ որում՝ առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքի ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի 1.5 մլն ԱՄՆ դոլարից:

բ. սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են մետրոպոլիտենի կառուցման (այդ թվում՝ կայարանների) ոլորտում (հատկապես՝ թունելների, կամրջային և ստորգետնյա այլ ենթակառուցվածքների) նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների, համապատասխան ուսումնասիրությունների, հետազոտությունների կատարած լինելը:

գ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

5. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Արդյո՞ք ԱԱՀ-ն վճարվում է Պատվիրատուի՝ այսինքն Երեւանի Մետրոպոլիտենի կողմից.

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Սույն գնման ընթացակարգի դեպքում Պատվիրատու է հանդիսանում ոչ թե Երեւանի Մետրոպոլիտենը, այլ Երեւանի քաղաքապետարանը:

<< հարկային օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» պարբերության համաձայն՝ «Աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե՝ կատարվող աշխատանքները և (կամ) մատուցվող ծառայությունները անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կամ կառուցվող կամ կառուցվելիք անշարժ գույքի հետ: Սույն կետում նշված աշխատանքներին և (կամ) ծառայություններին մասնավորապես վերաբերում են՝ շինարարության նախապատրաստման և

իրականացման (ներառյալ՝ հետախուզման, նախագծման, դիզայնի և կառուցման, մոնիթինգի, հեղինակային և տեխնիկական վերահսկողության) աշխատանքները և ծառայությունները»:

59-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Օրենսգրքի 14-րդ բաժնով սահմանված կարգով հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարողներ հաշվառվում են՝ կամավորության սկզբունքով հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների»:

64-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն՝ «ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները. պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցումը, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի և (կամ) տեղական տուրքի վճարում, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) համայնքային կառավարչական հիմնարկների կողմից ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումն այն մասով, որից հասույթը հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին: Սույն կետի կիրառության իմաստով՝ հասույթի կամ դրա մի մասի հաշվեգրումը պետական կամ համայնքների բյուջեների օգտին պետք է հիմնավորվի դրանց համապատասխան գանձապետական հաշվին փոխանցմամբ»:

103-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Անկախ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներից, շահութահարկ վճարողներ չեն համարվում՝ Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, որպես համայնքային կառավարչական հիմնարկ ազատված է ԱԱՀ-ից:

6. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Թույլատրված է արդյոք օգտագործել Eurocode Ստանդարտները ինժեներական նախագծման Նորմերի հետ կապված, որոնք սովորաբար պակաս պահպանողական են, քան Ուսական Ստանդարտները:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Սույն հարցի կարգավորումը գտնվում է քննարկման փուլում, որի մասին կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

7. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Հնարավոր է բաժանել պայմանագրի գրաֆիկը 2 տարբեր մասերի՝ այն ինն ամսվա շեմից ցածր պահելու համար: Սա թույլ կտա մեզ համաձայն Իտալիայի և Հայաստանի կողմից կնքված, «Կրկնակի Հարկումը Բացառելու Մասին Համաձայնագրի» շրջանցել Հայաստանում մշտական ներկայացուցչություն ունենալու անհրաժեշտությունը:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Սույն հարցի կարգավորումը գտնվում է քննարկման փուլում, որի մասին կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

8. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Արդյոք Համատեղ ձեռնարկության մասնակից գործընկերներից մեկը կարո՞ղ է դառնալ պայմանագրային գործակալ Հայաստանում:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Համատեղ ձեռնարկությունը առանձին իրավաբանական անձ է ու եթե պայմանագրի կողմ հանդես է գալիս հենց այդ իրավաբանական անձը, նույն պայմանագրի շրջանակներում համատեղ ձեռնարկության կողմերը որպես առանձին միավոր չեն կարող հանդես գալ համատեղ ձեռնարկության անունից:

Եթե խոսքը գնում է համատեղ գործունեության պայմանագրի մասին, որը չի ենթադրում առանձին բիզնես միավորի հիմնում ու կողմերը հանդես են գալիս միասին, բայց իրենց անունից ու իրավասություններն ու պարտավորությունները սահմանվում են համատեղ գործունեության պայմանագրով, ապա որպես գործակալ հանդես գալու համար անհրաժեշտ է համատեղ

գործունեության պայմանագրի մյուս մասնակիցների համաձայնությունը, որը կարող է ֆիկսված լինել համատեղ գործունեության պայմանագրով կամ լրացուցիչ այլ փաստաթղթով:

9. Պարզաբանման պահանջի տեքստ

Текст запроса для разъяснения

Geodata / CivEn / Siteco համատեղ ձեռնարկությունն այժմ աշխատում է իր բարձրորակ տեխնիկական առաջարկի պատրաստման վրա, որը, մեր կարծիքով, կհամապատասխանի Գործատուի բոլոր պահանջներին: Առաջարկը պատասխանատու և մրցակցային ձևով ավարտելու համար խնդրում ենք ձեզ հետաձգել սույն հայտի ներկայացման վերջնաժամկետը մինչև 01.10.2021թ., Իտալիայում արձակուրդային ժամանակահատվածի պատճառով:








Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Текст разъяснения

Գնման ընթացակարգի երկրորդ փուլի հրավերով հստակ սահմանված հայտերի ներկայացման ժամկետը ենթակա չէ փոփոխման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - , դեմ - 0:
Принято решение: за - против - 0.

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.

Հանձնաժողովի Комиссии		
Նախագահ՝ Председатель		Հ. Սարգսյան Г. Саргсян
Անդամներ՝ Члены		Ա. Սարգսյան А. Саргсян
		Դ. Ճգնավորյան Д. Чгनावорян
		Գ. Հարությունյան Г. Арутюнян
		Ս. Օհանյան С. Оганян
		Ա. Սեդոյան А. Седоян
		Գ. Ավետիսյան Г. Аветисян
		Վ. Բալասյան В. Баласян
		Է. Գալստյան Э. Галстян
Քարտուղար՝ Секретарь		Ա. Համբարձումյան А. Амбарцумян